

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

11 Դեկտեմբեր 1961

Ս. Էջմիածին

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԵՐԵԱՆԻՆ,**ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ,****Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄ****Սիրեցեալ Սրբազան Եղբայր Մեր ի Քրիստոս,**

Նոր Տարւոյ սեմին, սուրբ մտածումներով ու սպասումներով կը դիմաւորենք մեր Տիրոջ եւ Փրկչի Ծննդեան տօնը, եւ աստուածակառոյց Իզման Տեղէն՝ Սուրբ Էջմիածնէն, Ձեզի կը բերենք մեծ աւետիսը երկնային՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Խաղաղութիւն Ձերդ Ամենապատուութեան եւ Ձեր Սուրբ Սթոռին: Խաղաղութիւն Ձեր զինուորեալ Միաբանութեան եւ համայն Մեր հաւատացեալ ժողովուրդին: Խաղաղութիւն Ձեր ասպնջական բարի երկրին եւ համայն աշխարհին:

«Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր» (Մղմ. ԺնՈ. 2):

Սուրբ Ծննդեան աստուածառաք պատգամը թող առաւել խոր արմատներ արձակէ մարդոց եւ ժողովուրդներու սրտերէն ներս, եւ 1962 տարին թող դառնայ լոյսի նոր սին մը՝ մարդկութիւնը դէպի խաղաղութիւն եւ երջանկութիւն տանող:

Այս աղօթքը Մեր շրթներուն, Հուսաւորի Սուրբ Սթոռէն կ'օրհնենք Սրբոց Յակոբեանց Միաբանութեան զերաշնորհ եւ հոգեշնորհ հայրերը, Տնօրէն Ժողովոյ յարգարժան անդամները, Ձեր համայնքներու ազգային-մշակութային, հայրենասիրական եւ բարեսիրական կազմակերպութեանց անդամները, հայ վարժարաններու եւ կիրակնօրեայ դպրոցներու ազնիւ մշակները եւ սիրասուն աշակերտները, ինչպէս եւ մանաւանդ Մեր բոլոր հաւատացեալ եւ հարազատ զաւակները որ ի Գորգանան, մաղթելով ամենուդ արեւշատ տարին՝ քաջ առողջութեամբ եւ առաքինի գործերու յաջողութեամբ:

Եւ «դուք եղբարք՝ մի ծանծրանայք զբարիս գործել», «եւ ինքն Տէր խաղաղութեան՝ տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս» (Ք. Թեա. Գ. 14, 16):

Շնորհաւոր Նոր Տարի՜ն Ս. Ծնունդ:

Հայրապետական օրհնութեամբ՝

ՎԱԶԳԷՆ Ա.**ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ****ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**